քաղաքն՝ Իզնիկմիտ՝ յաւուր ծննդեանն Քրիստոսի 'ի մէջ եկեղեցւոյն ԻՌ. անձինս փակեցին և այրեցին։ Իսկ յետ այսքան չարեաց Դիոկղետիանոս 'ի Նիկոմիդիայ քաղաքին դեղատուութեամբ մեռաւ։ Իսկ Մաքսիմիանոս սրով խոցեալ բարձաւ. ասեն թէ՝ երկոցուն մահն 'ի մի օր հանդիպեալ կորեան 'ի կենաց։

Կայսերիոս Մաքսիմիանոսն ընդ Կոստանդին Լուկիոսի սկսաւ յամի Տեառն ՅԲ։ Կայսերիոս երկու ամ թագաւորեաց. և Կոստանդին Ժ.Զ.։ Սոքա իբրև թագաւորեցին, զկայսերութիւնն յերկուս բաժանեցին. զի Կայսերիոս նստաւ յԱլամանեաց աշխարհին և զամենայն հիւսիսոյ կողմն և զԱսիա արևելեան աշխարհօքն կալեալ տիրեաց, և Կոստանդին զԴաղմատիա։ Կայսերիոս՝ այր գոռոզ և հպարտ 'ի գիրս և 'ի խօսս և 'ի հարցմունս. որ և կեանքն վաղամեռիկ եղև։ Ի ժամանակս սորին կատարեցաւ սրբուհին Կատարինէ։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան